

# ՄԱՏԵՆԱԽՈՍԱԿԱՆ

մահուց սԾամեա 1709—1909

(Վրացերէն տպարան Զ. Ճիճինածէի 1709—1909), Թիֆլիս  
1909

Մեղ ուղարկած է վերոյիշեալ զերնադրով մի գրքով, նուի-  
րուած վրացերէն տառերի ու տպարանի պատմութեան։ Հե-  
ղինակը, վրացերէն ժողովրդական զանազան բրոշիւրների հրա-  
տարակիչ, կամեցել է տալ գլխաւորապէս վրաց տպարանների  
ժամանակադրական համառօտ պատմութիւնը, բայց և տեղ աեղ  
աւելացրել է էջմիածնում և Թիֆլիսում զանազան ժամանակ  
բացուած հայ տպարանների մասին խիստ կցկտուր և ըստ մեծի  
մասին աննիշտ տեղեկութիւններ։

Հայ տպարանների մասին պ. Ճիճինածէի գրամներից ա-  
մենախոշոր սխալն այն է, որ Սիմէոն կաթողիկոսի 1767 թուին  
էջմիածնում բացած հայ տպարանը անուանում է «առաջին  
Հայ տպարանը»։ Գուցէ պարոնը ցանկացել է ասել, որ նա առա-  
ջին հայ տպարանն էր Կովկասում՝ կամ Հայաստանում, քանի  
որ հայ տպարանների պատմութիւնը լետադարձ ընթացքով հաս-  
նում է մինչև 1512 թուականը, և թերեւս աւելի էլ վաղ, որ  
լայտնի չէ եղել վրացի բանասէրին։

Այնուհետև գրքովի մէջ մտնում են անթիւ սխալներ. օրի-  
նակ՝ լայտնի է, որ Վենետիկի Մխիթարեան միաբանութիւնը ու-  
նի հրատարակութիւններ ոչ միայն հայերէն լեզուով, այլ և ու-  
րիշ շատ լեզուներով, մինչև իսկ Նարեկացու լայտնի «Հաւատով  
խոստովանիմն» ու պատարագին ասուաղ «Որ օրհնես զայնոսիկ»  
հռչակաւոր աղօթքը տպած ունին 25 և 50 լեզուներով, այդ  
նոյն վենետիկեցիք 1850-ական թուականներին մի քանի եկե-  
ղեցական գրքեր էլ տպեցին վրացերէն լեզուով գլխաւորապէս  
Ախալցխալի վրացախօս հայկաթոփիկների համար, բայց պ. Ճի-

նինածէն մոլորութեան մէջ է ընկնում, ասելով թէ Վենետիկում 1850 թուին վրացի կաթոլիկ եկեղեցականները տնկախ տպարան բաց արին և վրացերէն գրքեր տպեցին:

Հեղինակը վրաց տպարան է անուանում այն բոլոր հայ տպարանները, ուր ի միջի այլոց ունեցել են վրացերէն տառեր և վրացերէն մի երկու գրքոյկ տպագրել: Անապիսի հայ տպարաններ եղել են հարիւրատոր, որոնց չէ կարելի ի հարկէ բուն վրաց տպարան անուանել:

Անհիմն տեղեկութիւններ է հազորդում հեղինակը և վրացերէն լրագրի սկզբնաւորութեան մասին, չունենալով ձեռքի տակ հնագոյն վրացերէն լրագիրը և հաստատ էլ չդիտենալով նորա սկզբնաւորութեան ժամանակը՝ նա ասում է, թէ Հայազգի Տէր Դաւիթ Յովհաննիսեանը իւր ազգական Պօղոս Յովհաննի. սեանի հետ միասին 1782 թուին սկսեցին վրացերէն գրքեր տպել, ի միջի այլոց տպեցին իրանց տպարանի պատմութիւնը. «այս գիրքը, գրում է Ճիենածէն, լրագրի կերպարանք է կրում»։ և. ուրեմն հայած իւղի նման ընդունում է, որ նա է վրաց առաջին լրագիրը։

Մինչև անդամ հեղինակը չէ տեսել այդ հրատարակութիւնը և թշյլ է տալիս իրան ասէկօսէնների հիման վերայ ըստ կամս գունաւորումներ տալ պատմական գէպքերին. նա ասում է, հինաւուց մարդկանցից լսել է, որ այդպիսի հրատարակութիւնը «լէպօրտի» (րապօրտ, ձանուցում) վերնագիրն է եղել կրելիս: Պատմութիւնը ասէկօսէնների վրայ չէ կարող հիմուել:

Թուականների մէջ աններելի սխաններ կան, օրինակ 1709 թուի փոխարէն 1909 է (եր. 4) և այլն. և առհասարակ 36 մանրատառ էշերից բազկացած թուականներով և մանր տեղեկութիւններով լի այս գրքոյկը որքան էլ համակրելի մի ձեռնարկութիւնն է և գովելի հեղինակի փոյթը ալդ մասին, լիբն է պատմուկան և ժամանագրական սխաններով և չէ կարող գիտնական այն արժէքը ունենալ, ինչ որ ցանկալի էր։